

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն (ՊՈԱԿ)

ԳՅՈՒՏԸ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն
Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն (ՊՈԱԿ)

ԳՅՈՒՏԸ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան 2011

ՀՏԴ 001.894/895(048.8)(479.25)

Գիտական ղեկավար՝ Լևոն Ղարիբյան
Հեղինակային խումբ՝ Լ. Այյան, Ե. Բաղդասարյան,
Ս. Սարգսյան, Լ. Վարդանյան
Խմբագիր-սրբագրիչ՝ Հ. Հարությունյան
Գլխավոր խորհրդատու՝ Ա. Գևորգյան

Վերլուծական ակնարկի հեղինակները ներկայացնում են գյուտերի ստեղծման պատմությունը, համաշխարհային և ազգային արտոնագրային համակարգերի ստեղծման, մտավոր սեփականության գործակալությունների կազմավորման, արտոնագրատերերի իրավունքների պահպանման և ճանաչման հիմնախնդիրները: Հայաստանի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ինովացիոն ռազմավարություն, որը կնպաստի երկրի տնտեսական աճին, արդյունաբերության զարգացմանն ու արդյունավետ համագործակցությանը: Ուսումնասիրվել են մի շարք երկրների գիտելիքահենք տնտեսության գնահատման բնութագրական ցուցիչները՝ համաձայն ՀԲ-ի մեթոդաբանության՝ համեմատականներ տանելով մեր տարածաշրջանի հարևան երկրների հետ: Հայաստանն ունի ինովացիոն ներուժ, որն ուղղելով ձեռներեցության ոլորտ կարող է դրական ազդեցությունն ունենալ ՀՀ տնտեսության զարգացման վրա:

Авторы аналитического обзора представляют историю создания изобретений, основные задачи создания и формирования всемирной и национальной патентных организаций: Агенство интеллектуальной собственности (АИС), признание и охрана прав владельцев патента (изобретателей). Для развития экономики Армении необходима инновационная стратегия, которая будет способствовать экономическому росту страны, промышленному развитию и эффективному сотрудничеству. Рассмотрены некоторые характерные показатели ряда стран, основанные на знаниях с точки зрения оценки экономики, согласно методологии всемирного банка, и при сравнении с соседними странами нашего территориального региона. Армения имеет инновационный потенциал, который при внедрении в предпринимательскую сферу, может положительно действовать на экономический рост РА.

The authors of the analytical review represent the history of creation of inventions, the primary goals of creation and formation of the Agency of Intellectual property, the recognition and protection of the rights of owners of the patents. Innovative strategy is necessary for the development of economy of Armenia. There are given some characteristic indexes for comparison of the countries of our territorial region from the point of view of an economy estimation, according to methodology of the World Bank. Armenia has innovative potential which introducing to entrepreneurs sphere, can positively operate on economic growth of PA.

«Մարդկային հանճարը արվեստի բոլոր ստեղծագործությունների և գյուտերի աղբյուրն է: Այդ ստեղծագործությունները մարդու արժանավայել կյանքի երաշխիքներն են: Պետությունը պարտավոր է ապահովել արվեստի և գյուտերի բոլոր տեսակների հուսալի պահպանությունը»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարիներ շարունակ ազգային հարստությունների հորիզոնականում մասնանշվել է հայ ժողովրդի մտավոր ներուժը՝ ստեղծագործ միտքը, գիտության, տեխնիկայի, արվեստի բնագավառներում նրա ստեղծած բարձրարժեք գործերը, գյուտերը, նորարարությունները: Մարդկության զարգացման առաջընթացն ու բարեկեցությունը հիմնված է տեխնոլոգիաների ու մշակույթի բնագավառներում մարդու՝ նոր ստեղծագործություններ արարելու մտավոր կարողության վրա: Մտավոր սեփականության պահպանությունն ու ոլորտի զարգացումը նպաստում են տնտեսության աճին, ստեղծում են արդյունաբերության նոր ճյուղեր և նոր աշխատատեղեր՝ մարդկանց կյանքը ավելի բարեկեցիկ դարձնելու համար:

Ինչ է մտավոր սեփականությունը, ինչ նշանակություն կարող է ունենալ տնտեսության զարգացման և դրա ճիշտ կազմակերպման գործում:

Արդյունաբերական սեփականության մասին օրենսդրությունը լայնածավալ իրավական նորմերի ամբողջության մի մասն է, որով և սահմանվում է մտավոր սեփականությունը: Այդ սահմանումը վերաբերում է մարդու մտավոր ստեղծագործական գործունեության արդյունքներին: Մտավոր սեփականության իրավունքները պաշտպանում են ստեղծագործողների շահերը՝ նրանց ստեղծագործական գործունեության արդյունքների նկատմամբ գույքային իրավունքներ տրամադրելու միջոցով: [8, էջ 3]:

Մտավոր սեփականության իրավունքների պահպանության ստեղծման գործընթացը ունի հեռավոր անցյալ: Միշտ անհրաժեշտություն է եղել սահմանել այնպիսի պարտադիր ընդհանուր կանոններ, որոնք կապահովեն կայուն և կանխատեսելի որոշակի հավասարակշիռ իրավիճակ հեղինակների և օգտագործողների համար:

Ավելի քան մեկ դար պահանջվեց միջազգային կոնվենցիաներով ամրագրելու այդ կանոններն ու նորմերը:

Ներկայումս զարգացած և զարգացող երկրները տիրապետում են այն առավելություններին, որոնք ընձեռում է մտավոր սեփականության իրավունքների պահպանությունը: Այն ոչ միայն խախտումների և բախումների կանխարգելման միջոց է, այլև ներդրումների, տեխնոլոգիաների փոխանցման, մրցունակության գործիք:

1873թ. Վիեննայում կազմակերպվել էր գյուտերի միջազգային ցուցահանդես: Մակայն շատ երկրներ հրաժարվել էին մասնակցել այդ ցուցահանդեսին՝ խուսափելով ցուցադրել իրենց տեխնիկական նորույթները՝ գյուտի իրավական պահպանության բացակայության պարագայում: Այդ նախադեպն էլ պատճառ էր հանդիսացել, որ 1883թ. Փարիզում հրավիրվեց շահագրգիռ պետությունների Դիվանագիտական համաժողով, ուր և ստորագրվեց արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիան: Արդեն այսօր

այդ կոնվենցիային անդամակցում է ավելի քան 171 երկիր: Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 1991թ. դեկտեմբերից [4, էջ 12]:

Ստավոր սեփականությունը բաժանվում է 2 հիմնական ոլորտների. առաջին - արդյունաբերական սեփականություն, այսինքն՝ գյուտեր, արդյունաբերական նմուշներ, ապրանքային նշաններ և ֆիրմային անվանումներին վերաբերող իրավունքներ, երկրորդ - հեղինակային և հարակից իրավունքներ: Արդյունաբերական սեփականության իրավունքը, որպես կանոն, ամրագրվում է համապատասխան օբյեկտի պետական գրանցմամբ, իսկ հեղինակային և հարակից իրավունքները որևէ գրանցում չեն պահանջում: [2, էջ 4]:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԼԿ

Արտոնագիրը, որպես մտավոր սեփականության իրավաբանական փաստաթուղթ, արձանագրվել է 13-րդ դարում, երբ Անգլիայի թագավորը պատվոգիր շնորհեց ծովի ջրից աղ ստանալու մեթոդը ստեղծողներին:

Մի փոքր անդրադարձ հայ գյուտարարների մասին, որոնց ստեղծած գյուտերի առաջին արտոնագրերի պատմությունը գալիս է դեռևս միջնադարից:

1564թ. Վենետիկում **Անտոն Սուրյանը** ստանում է արտոնագիր՝ խորտակված նավերը Ադրիատիկ ծովից դուրս բերելու գործում առաջարկած շինվածքների, մեթոդների և կատարած աշխատանքների համար, իսկ նրա որդին՝ Հովսեփ Սուրյանը, 30 արտոնագիր է ստանում տարբեր գյուտերի համար:

Ծագումով Ստամբուլից, ազգությամբ հայ, երիտասարդ քիմիկոս **Քրիստափոր Տեր-Սերոբյանը** 1864թ. ստեղծում է ամերիկյան դոլարի կանաչագույն ներկը, որը անհնար էր կեղծել:

1894թ. Լվովում ապրող **Հովհաննես Լուկաշևիչը (Ղուկասյան)** Գերմանիայում արտոնագրում է կերոսինային լամպի գյուտը, որը մինչև էլեկտրական հոսանքի դարաշրջանի սկիզբը լուսավորում էր ողջ Եվրոպան և Ամերիկան:

1907թ. **Հովհաննես Ադամյանը** Բեռլինում Արտոնագրերի Կայսերական Բյուրոյին է ներկայացնում է “Էլեկտրականության միջոցով հաղորդվող պատկերի կամ մի շարք պատկերների սևեռման և կրկնակի վերարտադրման սարքի” գյուտի հայտը, ուր առաջին անգամ արտացոլված և հիմնավորված էր պատկերի սև-սպիտակ հաղորդման գաղափարը: Նույն տարում նա ներկայացնում է “Օսցիլոգրաֆի հայելուց անդրադարձված լուսային փնջի տեղական տատանումները Հայսլերի խողովակի պայծառության տատանումների փոխարկող սարքը”, որն էլ հետագայում դարձել է երկնագույն հեռուստատեսության ստեղծման հիմքը: 1907թ. իրագործել է նաև Բեռլինից 600կմ հեռավորության վրա հաղորդալարերով գունավոր պատկերի հաղորդման առաջին փորձն աշխարհում:

Գաբրիել Կազանջյանին է պատկանում 1908թ. ներկայացված և 1911թ. արտոնագիր ստացած մազերի չորացման սարքի՝ ֆենի գյուտը:

1913թ. **Արմեն Դալաքքանյանը** ԱՄՆ-ում արտոնագիր է ստանում գորգագործության ավտոմատ դազգահի ստեղծման համար:

1931թ. Ամերիկայի Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս **Ջոզեֆ (Հովսեփ) Սլեփյանը** արտոնագրում է իզինիտրոնը (բոցավառիչը), որը հեղափոխություն առաջացրեց երկաթգծային տրանսպորտում:

Ասատուր Սարաֆյան` Օսկար Բենկեր. գունավոր տպագրության, մեքենաների, ինքնաթիռների փոխանցման տուփի գյուտերի հեղինակն է: Նա է ստեղծել նաև առաջին առանց ասեղ (գազային) ներարկիչը, որն այժմ օգտագործվում է ամբողջ աշխարհում: Օսկար Բենկերին են պատկանում նաև ավտոմեքենաների բենզինի պոմպի և ավտոյուղի չափիչի գյուտերը:

1944թ. **Արթուր Բուլբուլյանը** կարևոր գործ է կատարում` օդաչուների համար ստեղծելով թթվածնային դիմակ:

Բժշկության բնագավառում միլիոնավոր մարդկանց կյանք է փրկում միջուկային մագնիսական ռեզոնանսի սկզբունքով աշխատող սկաները (MRI, Յամեր), որի հեղինակը **Ռայմոնդ Դամադյանն** է:

1956թ. **Լյուիսեր Միմիջյանը** ստեղծում է դրամաբաշխային սարքը, (բանկոմատ) առանց որի դժվար է պատկերացնել այսօրվա քաղաքակրթությունը:

Հայերին է պատկանում նաև հաշմանդամների սայլակի գյուտը, որի հեղինակը` **Էմիկ Ավագյանը**, 1961թ. ստանում է Քենեդիի մրցանակը` «Ամենակարևոր ներդրումը անդամալուծների գործնական կյանք բերելու համար»:

Աշխարհում շատ մեծ համբավ և տարածում է ստանում **Ալեք Մանուկյանի** տաք և սառը ջրի ծորակի գյուտը, որը 1969թ.-ից կիրառվում է ողջ աշխարհում:

1977թ. **Միքայել Տեր-Պողոսյանի** ստեղծած համակարգչային տոմոգրաֆը հեղափոխություն է առաջացնում բժշկության մեջ:

Աշխարհի առաջին պլաստիկ վիրաբույժը **Վարազդատ Գազանջյանն** էր, ով ատամնաբույժ լինելով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայում վիրահատում-ուղղում էր զինվորների այլանդակված կզակները, աչքերը, քթերը, այտերը: Պատերազմից հետո վերադառնալով ԱՄՆ` հիմնում է պլաստիկ վիրաբուժության առաջին կենտրոնը: Առողջապահության այս ճյուղը այսօր միլիոնավոր դուրսերի եկամուտ է ապահովում:

Շինարարության ոլորտում մեծ հեղաշրջում է առաջացնում բեռնատարի վրա բեռոնախառնիչի տեղադրման գյուտը, որը պատկանում է **Ստեփան Ստեփանյանին**:

1980թ. արտոնագիր է ստանում **Արտաշես Հայկանյանի** ”կոկտեյլի փայտիկի” գյուտը: Այսօր արդեն դրա արտադրությունը հասնում է աստղաբաշխական թվերի:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո, ինչպես նաև այժմ Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում գիտության, արտադրության տարբեր ոլորտներում կատարած գյուտերի և ներդրումների համար հայերը բազմաթիվ արտոնագրեր են ստացել:

Հայերի արտոնագրած գյուտերի մոտավոր թիվը հասնում է 250 000:

ԳՅՈՒՏԸ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հնագույն ժամանակներից ի վեր մարդկությունն ամենուր ստեղծագործել է: Շատ գյուտեր ստեղծվել են հազարավոր տարիներ առաջ և այժմ դժվար է ճշտել դրանց ծագումը: Այն ամենը, ինչ շրջապատում է մեզ ներկայում, անցյալում ինչ-որ մեկի մտահղացման արդյունք է: Եվ դրանք արդեն այնքան սովորական ու կիրառելի են, որ այսօր դժվար է հավատալ, թե նախկինում դրանք գյուտեր են եղել: Գյուտերը բարելավում են մեր կյանքն ու կենսամակարդակը: Դրանց շնորհիվ թեթևանում են մեր առօրյա հոգսերը, հարստանում աշխարհի մասին մեր գիտելիքները:

Գյուտերի պահպանությանն առնչվող օրենքների մեծ մասն իրականում «գյուտ» հասկացությունը չի սահմանում: Այդուհանդերձ, գյուտը որևէ բնագավառի տեխնիկական խնդրի նորարարական լուծումն է՝ հիմնված նյութական աշխարհի հատկանիշների և օրինաչափությունների վրա և կարող է հանդես գալ որպես նոր արտադրանքի և կամ նոր արտադրության եղանակի տեսքով:

Գյուտը իրավական պահպանություն ստանալու համար պետք է լինի արդյունաբերորեն կիրառելի, ներառի նորարարական տարր, որը մինչ այդ անհայտ է եղել տվյալ բնագավառում, ունենա գյուտարարական մակարդակ և վերջապես արտոնագրելի լինի:

Գյուտ ստեղծելու համար գյուտարարները որպես կանոն սկզբում որոշում են դրա անհրաժեշտությունը և այնուհետև մտածում լուծման ստեղծագործական ուղիների մասին [5, էջ 5-10]:

Գյուտարարը այն ֆիզիկական անձն է, ում ստեղծագործական աշխատանքով է ստեղծվում գյուտը:

Հայտատուն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ով արտոնագրային հայտը ներկայացնում է մտավոր սեփականության գործակալություն:

Արտոնագրատերը այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ում անունով տրված է արտոնագիրը և իրավունք ունի օգտագործելու տվյալ արտոնագրով պահպանվող գյուտը:

Գյուտի արտոնագիրը հեղինակին */արտոնագրատիրոջը/* տալիս է բացառիկ իրավունք արգելելու այլ անձանց պատրաստել, վաճառել կամ ներդնել իր արտոնագրած գյուտը, ինչպես նաև գույքային իրավունքները փոխանցել երրորդ անձի [4, էջ 14-15]:

Գյուտը արտոնագրելու առաջին քայլը հայտի ներկայացումն է տվյալ երկրի մտավոր սեփականության գործակալություն: Հայտով պայմանավորվում է արտոնագրային իրավունքների ծավալը, գյուտի էությունը և այն իրագործելու հետ կապված տեղեկատվությունը: Ներկայացվում են տվյալներ գյուտարարի, արտոնագրատիրոջ մասին: Գյուտի արտոնագրի հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները բոլոր երկրներում նույնն է:

Ոչ բոլոր գյուտերն են ենթակա արտոնագրման: Գյուտը պետք է ընդգրկված լինի ազգային օրենքով սահմանված արտոնագրման ենթակա օբյեկտների ցանկում: Տարբեր երկրներում այն տարբեր է, շատ երկրներ արտոնագրաունակությունից բացառում են այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են գիտական տեսությունները, մաթեմատիկական մեթոդները, բույսերի կամ կենդանիների տարբեր տեսակները, բնական նյութերի հայտնագործությունները, բուժման մեթոդները (ի տարբերություն դեղորայքային արտադրանքի) և ցանկացած այլ գյուտեր, որոնց առևտրային օգտագործման արգելումն անհրաժեշտ է հասարակական կարգը, մարդկանց բարոյականությունն ու առողջությունը պահպանելու համար [8, էջ 6]:

Արտոնագիրն այն պաշտոնական փատաթուղթն է, որը պետությունը տալիս է գյուտարարին, եթե գյուտը նոր է, ունի գյուտարարական մակարդակ, արդյունաբերորեն կիրառելի է և հաստատում է դրա առաջնայնությունը, հեղինակությունը և արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքը:

1975թ. ուժի մեջ է մտնում արտոնագրերի միջազգային դասակարգումը, որի նպատակն է ստեղծել դասակարգման միասնական համակարգ ամբողջ աշխարհում: Ըստ Միջազգային Արտոնագրային Դասակարգման (ՄԱԴ) գոյություն ունեն 8 բաժիններ.

- A-Մարդու կենսական պահանջների բավարարում
- B-Տարբեր տեխնոլոգիական գործընթացներ, փոխադրում
- C-Քիմիա, մետաղագործություն
- D-Մանածագործություն, թուղթ
- E-Շինարարություն, լեռնագործություն
- F-Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ, պոմպեր, գենք, զինամթերք
- G- Ֆիզիկա
- H- Էլեկտրականություն

Բոլոր ժամանակներում էլ արտոնագրերը օգնում են որոշելու, թե երբ, որտեղ և ում կողմից են ստեղծվել գյուտերը: Արտոնագրերն ունեն տարածքային և ժամանակային սահմանափակում, այսինքն, գործում են որոշակի տարածքում և ժամանակահատվածում:

Օգտակար մոդելներն այնքան լայնորեն տարածված չեն, որքան արտոնագրերը, սակայն դրանք նույնպես օգտագործվում են գյուտերի պահպանության նպատակով: Օգտակար մոդելները իրավական պահպանություն ունեն ավելի քան 30 երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Օգտակար մոդելներին ներկայացվող անհրաժեշտ պայմաններն այնքան խիստ չեն, ինչպես արտոնագրերինը: Նորարարության պահանջը պետք է պահպանվի, սակայն գյուտարարական մակարդակի կամ ոչ ակնհայտության հանդեպ պահանջն ավելի մեղմ է կամ նույնիսկ բացակայում է: Օգտակար մոդելի համար օրենքով սահմանված պահպանության առավելագույն ժամկետը սովորաբար ավելի կարճ է, քան գյուտի արտոնագրի համար [8, էջ 8-9]:

Ազգային և տարածաշրջանային արտոնագրային համակարգերի ստեղծումն ու կատարելագործումը՝ իրենց դրական ու բացասական կողմերով լուրջ խթան են տեղական արդյունաբերության զարգացման համար:

Համաձայն Ստոկհոլմյան Կոնվենցիայի, 1967թ հիմնադրվեց Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպությունը /ՄՍՀԿ/, որը ամբողջ աշխարհում ստեղծագործողների և մտավոր սեփականության սեփականատերերի իրավունքների պահպանության ապահովման, ինչպես նաև իրենց ստեղծագործական արդյունքների պահպանության միջոցով գյուտարարների ու հեղինակների խրախուսման ու ճանաչման խնդիր ունի: ՄՍՀԿ-ն նաև գրանցման միջազգային համակարգեր է ապահովում արտոնագրերի համար, որոնք զգալիորեն հեշտացնում են մտավոր սեփականության միաժամանակյա պահպանության անխափան գործընթացը մեծ թվով երկրներում: Այդ համակարգերը բազմաթիվ լեզուներով արտոնագրային հայտեր ներկայացնելու փոխարեն դիմողներին մեկ լեզվով հայտ ներկայացնելու և մեկ հայտի համար վճարելու հնարավորություն են տալիս: ՄՍՀԿ-ի կողմից կառավարվող միջազգային պահպանության համակարգերը ներառում են արդյունաբերական սեփականության որոշակի իրավունքների պահպանության տարբեր մեխանիզմներ, ինչպես օրինակ, արտոնագրային համագործակցության մասին պայմանագիրը (PCT)՝ մի քանի երկրներում արտոնագրային հայտ ներկայացնելու համար [8, էջ 16]:

Հայաստանի Հանրապետությունը 1993 թ. անդամակցում է ՄՍՀԿ-ին: 1995թ. ՀՀ անդամակցում է նաև եվրասիական արտոնագրային կազմակերպությանը, ինչի շնորհիվ ԱՊՀ շրջանակում մեկ միջազգային հայտը, մեկ լեզվով լրացված և միասնական տուրքի վճարումով, իրավական ուժ ունի ԱՊՀ բոլոր երկրներում:

Հայաստանի անկախացումից հետո աշխատանքներ տարվեցին մտավոր սեփականության ոլորտը կարգավորող պետական լիազորված մարմնի կազմավորման և իրավական դաշտի ստեղծման ուղղությամբ: 1992թ. ստեղծվեց ՀՀ արտոնագրային վարչությունը՝ Հայարտոնագիրը, այժմ՝ «Մտավոր սեփականության գործակալություն»: Այն ձեռնամուխ եղավ արդյունաբերական սեփականության օբյեկտների պաշտպանությունն ապահովող օրենսդրական դաշտի ձևավորմանը [3, էջ 4-5]:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության և արտադրության մեջ օգտագործելու ցուցանիշներով Խորհրդային Հայաստանը իր ուրույն տեղն ուներ նախկին խորհրդային հանրապետությունների շարքում: Հատկապես 1980-90թթ. Հայաստանի իրավաբանական անձանց և անհատ գյուտարարների կողմից գրանցվել էր մոտ 5508 գյուտ, իսկ 100000 բնակչին ընկնող գրանցված գյուտերի ցուցանիշներով Հայաստանը 6-րդն էր Ռուսաստանից, Բելոռուսիայից, Ուկրաինայից, Մերձբալթյան երկրներից հետո: [3, էջ 4]:

Վերլուծելով խորհրդային շրջանի տվյալները՝ ուրվագծվում է հետևյալ պատկերը. ՀայԳՏԼԳՀԻ-ում ստեղծված տվյալների բազայում ընդգրկվել է ավելի քան 53000 գյուտերի նկարագրություն (1924-1992թթ.), այդ թվում ԽՍՀՄ Պետական ռեգիստրում ամրագրված տվյալների երկու բազա, յուրաքանչյուրում Հայաստանում բնակվող գյուտարարների 10000 հեղինակային իրավունքի նկարագրություն ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև նույն ժամանակահատվածում նախկին ԽՍՀՄ երկրներում բնակվող հայազգի գյուտարարների 33000 գյուտի նկարագրություն:

1964-1998 թթ. ԱՄՆ-ում հայերը ստացել են 9600 արտոնագիր [1, էջ 2-3]:


Եթե խորհրդային ժամանակահատվածում գյուտարարների ուշադրության կենտրոնում էին առավելապես գիտատար տեխնոլոգիաների բնագավառները, ապա ներկայումս գերակշռում են մարդու կենսական պահանջների բավարարմանն ուղղված ոլորտները:

1995-2007թթ. ժամանակահատվածում Հայաստանում տրվել է միջին հաշվով տարեկան 125 արտոնագիր: Դրանց մեծ մասը վերաբերում է առաջին անհրաժեշտության ապրանքներին, քիմիային և մետաղագործությանը, տրանսպորտային համակարգերին, ֆիզիկային, տեղեկատվական տեխնոլոգիաներին, հեռահաղորդակցման ոլորտին, առողջապահությանը, բժշկությանը, օպտիկային:

Ըստ վիճակագրական տվյալների 1993-2000թթ. ներկայացվել է 1497 գյուտի հայտ, որոնցից 1045-ը՝ ազգային հայտատուներից, 452-ը՝ օտարերկրյա հայտատուներից (դիագրամ1)


Ներկայացված հայտերի և տրված արտոնագրերի քանակը ըստ տարիների /1993-2000թթ./

■ 1993 ■ 1994 ■ 1995 ■ 1996 ■ 1997 ■ 1998 ■ 1999 ■ 2000 ■ ընդամենը



Ներկայացված հայտերի և տրված արտոնագրերի քանակը ըստ տարիների /2000-2010թթ./

■ 2000 ■ 2001 ■ 2002 ■ 2003 ■ 2004 ■ 2005 ■ 2006 ■ 2007 ■ 2008 ■ 2009 ■ 2010 ■ ընդամենը



2000թ. դրությամբ ստացված գյուտերի հայտերի ընդհանուր քանակը պակասել է. ընդ որում՝ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 63-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից՝ 25-ով:

2001-2010թթ. ընկած ժամանակահատվածում արտոնագրային գործակալություն է ներկայացվել 1742 հայտ:

Հայտերի ներկայացման աճ է նկատվել 2008թ., իսկ 2010թ.՝ անկում:

Ներկայացված հայտերից արտոնագիր են ստացել 1563 հայազգի և 191 օտարազգի գյուտարներ: Դիագրամից երևում է, որ տրված արտոնագրերի աճ է նկատվում 2006թ., իսկ արդեն 2010թ.՝ անկում [9]:

ԳՅՈՒՏԸ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամն ու քաղաքական իրադարձություններն էական ազդեցություն ունեցան Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի վրա: Պարզ դարձավ, որ Հայաստանին անհրաժեշտ է ազգային տնտեսական ինովացիոն ռազմավարություն և տնտեսության զարգացման նոր մոդել, որը կկարողանա դիմակայել տարաբնույթ ցնցումների:

Հայաստանի համար ներկա փուլի ռազմավարական գերխնդիրն է գիտելիքահենք տնտեսության կառուցումը՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար առկա լուրջ նախադրյալների իրացման վրա: Շեշտադրումը կատարվում է մարդկային մտքի զարգացման, կարողությունների բացահայտման և ավելացման, գիտատեխնիկական արագաքայլ առաջընթացի վրա: Այնուամենայնիվ Հայաստանն ունի որոշակի ինովացիոն ներուժ և այն ուղղելով ինովացիոն ձեռներեցության ոլորտ, կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման վրա:

Տնտեսության ինովացիոն զարգացումը Հայաստանում մեկնարկել է ազգային ինովացիոն համակարգի ձևավորմամբ: Այս փուլի հիմնական նպատակը ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումն է: Բացի այդ ինովացիոն ռազմավարությունը պետք է ուղղվի այնպիսի արտադրությունների կազմակերպման խթանմանը, որոնք կարող են կիրառել նորամուծություններ և արտադրել միջազգային չափանիշներով գիտատար արտադրանք՝ դուրս գալով արտաքին շուկաներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2009թ. ստեղծվեց ինովացիոն գործունեության իրականացմանն աջակցող մասնագիտացված պետական կառույց՝ «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՆԶԱԿ ՊՈԱԿ), որի հիմնական նպատակն է տեխնոլոգիաների փոխանցման գործուն մեխանիզմների ձևավորումն ու ներդրումը, գիտատեխնիկական տեղեկատվական և գրադարանային ծառայությունների մատուցումը:

Կենտրոնը ծառայում է որպես հարթակ նորարարների և ձեռներեցների միջև երկարաժամկետ հարաբերությունների ձևավորման համար: Ունենալով գիտատեխնիկական պարբերաբար արդիականացվող հիմնապաշարներ, հնարավորություն ունի իրականացնելու արդյունավետ տեղեկատվական աջակցություն ինովացիոն գործունեությանը: Կենտրոնի վարչական կառուցվածքում գործում է գիտատեխնիկական գրադարանը իր բազմաբնույթ ֆոնդերով՝ մատուցելով տարաբնույթ գրադարանային տեղեկատվական ծառայություններ,

իրականացնում է գիտատեխնիկական համապատասխան ռեսուրսների պարբերական և կանոնակարգված հավաքագրում, մշակում, պահպանում և սպասարկում՝ ժամանակակից տեղեկատվական համակարգերի ներդրմամբ: Իր եզակի բնույթով և ծավալով առանձնանում է արտոնագրային ֆոնդը, որն ընդգրկում է 17 մլն անվանում արտոնագրային փաստաթուղթ՝ տարբեր փաստաթղթային կրիչներով: Արտոնագրային ֆոնդը հանրապետության արտոնագրային տեղեկատվության հիմնական պահոցն է, որտեղ պահպանվում են 77 երկրների և 5 տարածաշրջանային արտոնագրային կազմակերպությունների փաստաթղթեր՝ սկսած 19-րդ դարից: Ժամանակակից տեխնոլոգիաների արագընթաց զարգացման պայմաններում օրեցօր ավելանում է արտոնագրային տեղեկատվությունը համացանցում, որն ավելի հասանելի և մատչելի է դարձել: Չնայած համացանցի ընձեռած առավելություններին, գրադարանի արտոնագրային ֆոնդը չի կորցրել իր տեղեկատվական արժեքն ու նշանակությունը: Կան փաստաթղթեր, որոնք դեռևս արտացոլված չեն համացանցում: Իր ուրույն արժեքն ունի "Изобретения стран мира" սեղմագրային հանդեսը, որտեղ համակարգված և դասակարգված ներկայացված են տարբեր երկրների արտոնագրերի բնագրերի սեղմագրերը և դրանց ռուսերեն թարգմանությունները:

Համաշխարհային տնտեսությունում մրցունակ լինելու համար երկրի արդյունաբերության տեղական, և արտահանող հատվածները պետք է նորարարական լինեն: Ակնհայտ է, որ ցանկացած պետություն պետք է իրականացնի նորարարական ռազմավարություն, հիմնված փաստերի և վերլուծությունների վրա, նախաձեռնի և աջակցի նորարարական մտահաղացումներին:

Ըստ 2009-2010թթ. Նորարարության համաշխարհային ցուցիչի (INSEAD & CII, 2010) Հայաստանը առաջադիմել է նորարարության ոլորտում՝ 104-րդ տեղից հասնելով 82-րդ տեղը: Սա պայմանավորված է հիմնականում մեթոդաբանության փոփոխությամբ, առավել թարմ տվյալների օգտագործմամբ, քան թե կտրուկ քայլերի իրականացմամբ:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2010-2011թթ. Համաշխարհային մրցունակության զեկույցում /ՄՀԶ/ 139 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 98-րդ տեղը՝ գրանցելով մրցունակության ցուցանիշների համեստ բարելավում [7, էջ 23, 35]:


Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս մրցունակության կատարողականը մեր տարածաշրջանում 2010թ.

Երկիր	Վարկանիշ 2010	Միավոր
Հայաստան	98	3.76
Վրաստան	93	3.86
Ադրբեջան	57	4.29

Բարձրացել են առողջապահության, կրթության և ապրանքների շուկաների արդյունավետության ցուցանիշների միավորներն ու դիրքերը, սակայն մակրոտնտեսական կայունության և ֆինանսական շուկաների մասով անկում է գրանցվել: Ցածր միավորներն արտացոլում են 2009թ. Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը և արդյունքում գրանցված ազգային տնտեսության մեծ անկումը, որը երկիրը վերադարձրեց ռեսուրսների վրա հիմնված

մրցունակությունից դեպի արդյունավետության վրա հիմնված տնտեսության դաս անցման փուլ:

Նույն զեկույցում տնտեսության զարգացման 1-2 [13] փուլերում գտնվող մեր տարածաշրջանի պետությունների մրցունակության կատարողականը առավել ցայտուն արտացոլված է ստորև ներկայացվող հիստոգրամում:



Երկրի տնտեսության ասպարեզում առավելությունների շարքին են դասվում աշխատուժի շուկայի կանոնակարգումը, սակագների մակարդակը, ընկերություն հիմնելու մատչելիությունը, իսկ թերություններից են մրցակցային միջավայրի գործոնները և ֆինանսական շուկայի զարգացումը, ի դեպ Հայաստանի մրցակցային առավելությունների և թույլ կողմերի տասնյակը գրեթե չի փոփոխվել [7, էջ 36]:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանը ձեռնամուխ է եղել գիտատար տնտեսության ստեղծմանը, որի կյանքի կոչման համար կարևոր դեր է խաղում նորարարական գործունեությունը: Նորարարությունը չափազանց կարևոր է տնտեսությունը ձևավորելու գործընթացում և կենսական նշանակություն ունի Հայաստանի համար, որը չունի բնական ռեսուրսների մեծ պաշար, չունի ելք դեպի ծով, իսկ տրանսպորտային ծախսերը մեծ են:

Ըստ Համաշխարհային Բանկի /ՀԲ/ համապատասխան տվյալների բազաների ընձեռած հնարավորությունների [http://info.worldbank.org/etools/kam2/KAM_page7.asp] և ՀԲ-ի

մեթոդաբանության, ուսումնասիրվել են մի շարք երկրների բնութագրական ցուցիչները գիտելիքահենք տնտեսության գնահատման տեսանկյունից՝ համեմատականներ տանելով մեր տարածաշրջանի հարևան երկրների հետ:


Ստորև ներկայացվող հիստոգրամները ներկայացնում են 146 երկրների 109 կառուցվածքային և որակական փոփոխականների միջոցով առանձին երկրների ակտիվության գնահատումը ըստ գիտելիքահենք տնտեսության 4 հենասյունների՝ ինստիտուցիոնալ ռեժիմ և տնտեսական խթան, նորարարություն, կրթություն, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներ:

Ինստիտուցիոնալ ռեժիմ և տնտեսական խթան ասելով պետք է հասկանալ գոյություն ունեցող և նոր գիտելիքների արդյունավետ օգտագործման խթանումը և ձեռներեցության բարգավաճումը:


Նորարարություն ասելով պետք է հասկանալ ֆիրմաների, գիտահետազոտական կենտրոնների, համալսարանների, խորհրդատուների և այլ կազմակերպությունների գործունեության արդյունավետ համակարգ, որը ընդունակ է յուրացնել արագ աճող գիտելիքների գլոբալ պաշարները, դրանք համապատասխանեցնել տեղային պահանջմունքներին և ստեղծել նոր տեխնոլոգիաներ:

Կրթություն ասելով պետք է հասկանալ կրթված և արհեստավարժ ազգաբնակչություն, որը կարող է ստեղծել, փոխանակել և արդյունավետ օգտագործել գիտելիքները:

Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներ ասելով պետք է հասկանալ աջակցություն տեղեկատվության ստեղծմանը, մշակմանը և տարածմանը:




**Երկրների համադրումը ըստ ՀԲ-ի գիտելիքի գնահատման
մեթոդաբանության
/2000թ./**



Հիստորիայից հստակ երևում է, որ Հայաստանը ըստ գիտելիքահենք տնտեսության ցուցիչի առավել մոտ է կանգնած բոլոր երկրների միջինին, քան թե Վրաստանն ու Ադրբեջանը:

Վերը նշված տեսանկյունից հետաքրքրական է շուրջ 27 երկրների **ինստիտուցիոնալ ռեժիմի և տնտեսական խթանի համեմատականը**, որն իր մեջ ներառում է սակագնային և ոչ սակագնային արգելքները, որակի կանոնակարգումը և օրենսդրությունը:


Տնտեսական ռեժիմի համեմատական ըստ երկրների



Հիստոգրամից պարզ երևում է, որ չնայած Հայաստանը համապատասխանաբար 6 և 1 դիրքով առաջ է Ադրբեջանից և Վրաստանից, սակայն բավականին հետ է մնում այնպիսի երկրներից, ինչպիսիք են Էստոնիան, Մեծ Բրիտանիան, Իսլանդիան և այլն:

Այժմ ներկայացնենք **կրթությունը և մարդկային ռեսուրսները** բնութագրող հիստոգրամը, որն իր մեջ ներառում է մեծահասակների կրթվածության աստիճանը, միջնակարգ և բարձրագույն կրթությունը:


Կրթության ոլորտում համեմատական ըստ երկրների



Հիստոգրամից երևում է, որ չնայած Հայաստանը 5 դիրքով առաջ է Ադրբեջանից, սակայն 1 դիրքով հետ է մնում Վրաստանից: Միաժամանակ պետք է նշել, որ երեք պետություններն էլ բավականին հետ են մնում այնպիսի երկրներից, ինչպիսիք են Էստոնիան, Մեծ Բրիտանիան, Իսլանդիան և այլն: 2000թ. համեմատությամբ նշված պետություններում կրթական համակարգը անկում է ապրել, ընդ որում, եթե Հայաստանն ու Ադրբեջանը անկում են ապրել մեկ դիրքով, ապա Վրաստանը՝ երեք դիրքով:

Ինչ վերաբերում է գիտելիքահենք տնտեսության հաջորդ հենասյանը՝ **Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներին**, ապա այն իր մեջ ներառում է 1000 բնակչին ընկնող հեռախոսները, համակարգիչները և Բնտերնետ հասանելիությունը:


Տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում համեմատական ըստ երկրների



Հիստոգրամից երևում է, որ չնայած Հայաստանը գտնվում է Վրաստանի և Ադրբեջանի միջև, սակայն երեք պետություններն էլ, ի տարբերություն նախորդ հիստոգրամների, հետ են մնում Միջինից ցածր երկրների ցուցիչից: Միաժամանակ պետք է նշել, որ երեք պետություններն էլ առնվազն 9 կետով հետ են մնում Բոլոր երկրների միջին ցուցիչից:


Առանձնակի ուշադրության է արժանի գիտելիքահենք տնտեսության **Նորարարությունը** բնութագրող հիստոգրամը, որն իր մեջ ներառում է հեղինակային վարձատրություններն ու մուտքերը, ԱՄՆ ներկայացված արտոնագրերի և ապրանքային նշանների արտոնագրային հայտերը, գիտատեխնիկական ամսագրերի հոդվածները:

Նորարարության ոլորտի համեմատական ըստ երկրների



Հիստոգրամից պարզ է դառնում, որ Հայաստանը բավականին բարձր դիրք է զբաղեցնում Վրաստանի և Ադրբեջանի համեմատ, սակայն երեք պետություններն էլ հետ են մնում Բոլոր երկրների միջին ցուցիչից: Ի դեպ, Հայաստանը 6 դիրքով առաջ է Միջինից ցածր երկրների ցուցիչից, Վրաստանը՝ 1 դիրքով, իսկ Ադրբեջանը հետ է մնում 5 դիրքով:

Տարածաշրջանում Հայաստանի բարձր դիրքի վառ ապացույց է նաև ստորև ներկայացվող հետևյալ դիագրամը:



Համաշխարհային Բանկի /ՀԲ/ համապատասխան տվյալների բազաների ուսումնասիրման և վերլուծության արդյունքում բացահայտվել է մի հետաքրքիր օրինաչափություն: Երբ դիտարկվել է 27 երկրներում չորս հենասյունային ցուցիչներից առանձին վերցրած ամեն մեկի ազդեցությունը մնացած երեքի վրա ըստ համապատասխան դիրքի նվազման հաջորդականության, ապա պարզվել է, որ դիտարկվող երկրների Գիտելիքահենք տնտեսության և Գիտելիքի ցուցիչներն ու Տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաների և Նորարարության ցուցիչները համապատասխանաբար ցուցաբերում են փոփոխման միատեսակ օրինաչափություն, չնայած որ նրանցից յուրաքանչյուրում տեղի է ունենում երկրների դիրքի փոփոխություն՝ առանց որոշակի օրինաչափության: Եթե առաջին զույգի դեպքում այն կարելի է ընդունել բնականոն երևույթ, ապա երկրորդ զույգի նմանատիպ դրսևորման պատճառը հետագա ուսումնասիրման անհրաժեշտություն ունի:

Նորարարությունը նոր ապրանքի, գործընթացի կամ ծառայության ներդրումն է, որը ստեղծում է իրական առևտրային կամ սոցիալական արժեք: Նորարարությունը կարող է ի հայտ գալ ոչ միայն ապրանքների և ծառայությունների, այլև համապատասխան գործընթացների՝ մարքեթինգի, բաշխման և կազմակերպման բնագավառներում: Նորարարությունը կարող է վերաբերել նաև արժեքային շղթային և ստեղծել միանգամայն նոր արտադրանքներ և տնտեսության նոր ճյուղեր:

Ուշագրավ է նաև այն դիտարկումը, որ բարձր ցուցիչներ ունեցող երկրներում, որպես կանոն, հենասյունային ցուցիչների փոփոխության դինամիկան համահունչ է մեկը մյուսին՝ ոչ էական շեղումներով և հնարավորինս կանխատեսելի, իսկ ցածր ցուցիչներ ունեցող


երկրներում այն ընթանում է էական շեղումներով և կանխատեսելի չէ, բացառությամբ նորարարության ցուցիչի, որի դիրքը, որպես կանոն, բարձր է գտնվում մնացած հենասյունային ցուցիչների համեմատ:

Ուստի Նորարարությունը կարող է լինել բացառիկ և հեղաշրջող, տեխնոլոգիաների ներմուծումը նոր միջավայր ևս կարող է համարվել նորարարություն: Նորարարության արդյունքի գնահատման հիմնական չափորոշիչն արտադրողականության բարձրացումն է, որը պայմանավորված չէ լրացուցիչ աշխատուժով կամ կապիտալով: Դա էլ հանգեցնում է կյանքի կենսամակրոդակի բարձրացմանը՝ առանց մասնավոր տրանսֆերտների, սպեկուլյատիվ ներդրումների կամ օտարերկրյա օգնության:

Ինչպես վերը նշվել է, նորարարությունը բնութագրող հիմնական ենթացուցիչներից է ԱՄՆ ներկայացված արտոնագրերի և ապրանքային նշանների արտոնագրային հայտերի քանակը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համեմատական վերլուծություն կատարել այդ ենթացուցիչի տեսանկյունից նույնպես:

Ստորև ներկայացված են ԱՄՆ-ում գրանցված երեք երկրների արտոնագրերի դիագրամը ըստ քանակի և տարիների, ինչպես նաև նրանց բաշխվածությունը ըստ տեխնոլոգիական դասերի՝ համաձայն ԱՄՆ ազգային արտոնագրային դասակարգչի

[http://www.uspto.gov/web/offices/ac/ido/oeip/taf/clsstca/gexstccld_gd.htm]:





Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
359 - օպտիկական համակարգեր և տարրեր 2	424 - դեղամիջոցներ, կենսաներգործող բաղադրություններ 5	532 - օրգանական Միացություններ 3
433 - ատամնաբուժություն 2	438 - կիսահաղորդիչների և կիսահաղորդիչ սարքավորումների արտադրություն 2	123 - ներքին օրգանական այրում 1
715 - փաստաթղթերի, ինտերֆեյսի, էկրանի պահպանում և տվյալների մշակում 2	29 - մետաղագործություն 4	128 - վիրաբուժություն 1
204 - քիմիա. Էլեկտրականություն և էլեկտրական ալիքներ 1	257 - պինդ մարմինների ակտիվ սարքավորումներ օրինակ, տրանզիստորներ, դիոդներ 4	166 - նավթահորեր (հորատանցք) գազ և նավթ 1
221 - բաշխում 1	250 - ճառագայթման էներգիա 3	210 - հեղուկների գոտում 1
269 - գործատուներ 1	310 - Էլեկտրական գեներատոր կամ շարժիչի կառուցվածք 2	251 - էլեկտրոնային լամպ և կիրառում 1
365 - վիճակագրական տեղեկատվության պահպանում և որոնում 1	36 - կոշիկ և կաշի 1	423 - քիմիա և անօրգանական միացություններ 1
424 - դեղամիջոցներ, կենսաներ գործող բաղադրություններ 1	128 - վիրաբուժություն 1	507 - ընդերքի հորատում, նավթահորի շահագործում և նավթի հանքավայրեր 1
455 - հեռահաղորդակցություն 1	174 - էլեկտրականություն. Հաղորդիչներ և մեկուսիչներ 1	702 - Չափում, տրամաչափում կամ փորձարկում 1
Ընդամենը 14	216 - հիմքի փորում 1	Ընդամենը 11
	359 - օպտիկական համակարգեր և տարրեր 1	
	428 - հիմնապաշարներ կամ այլ հոդվածներ 1	
	436 - քիմիա. վերլուծական և իմունաբանական փորձարկումներ 1	
	445 - Էլեկտրական լամպեր կամ էլեկտրական պարպման բաղադրիչներ կամ սարքավորումներ 1	
	Ընդամենը 31	

Որպես կանոն, տարբեր երկրների արտոնագրատերեր ԱՄՆ արտոնագրերի և ապրանքային նշանների գործակալությունում համապատասխան գրանցման անհրաժեշտություն են ունենում այն ակնկալիքով, որ չնայած սահմանված բարձր տուրքերին, այսուհանդերձ, գյուտը հետագա կիրառություն կունենա, կստանա հեղինակային վարձատրություն, կառևտրայնացվի՝ ապահովելով առավել մեծ եկամուտ, քան կատարված ծախսերն են:

Այս տեսանկյունից ակնհայտ է, որ միանձնյա առաջատարն է Վրաստանը: Եթե Հայաստանը շուրջ երկու անգամ հետ է մնում Վրաստանից, ապա Ադրբեջանը նրան զիջում է շուրջ երեք անգամ: Եթե Վրաստանից ներկայացված հայտերը ընդգրկում են 14 տեխնոլոգիական դասեր, ապա Հայաստանից ներկայացված հայտերը՝ 10 դաս, իսկ Ադրբեջանից ներկայացվածները՝ 9 դաս: Ընդ որում, ըստ դասերի՝ Վրաստանում և Հայաստանում կրկնվում են 3 դաս, իսկ Վրաստանում և Ադրբեջանում՝ 1 դաս:

Ինչպես հայտնի է, արտոնագրային հայտերը ողջ աշխարհում ներկայացվում են PCT կամ ազգային ընթացակարգերով արտոնագրային համապատասխան գործակալություններ՝


գյուտերի հանդեպ բացառիկ իրավունք ձեռք բերելու նպատակով: Ստորև ներկայացվում է հայտերի քանակական ցուցանիշների համադրումը ըստ տարիների և տարածաշրջանի երկրների.



Այստեղ նույնպես՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ արտոնագրերի հայտերի միջին քանակով, միանձնյա առաջատարը Վրաստանն է. եթե առաջին դեպքում Հայաստանը զիջում է մոտ 2.5 անգամ, ապա երկրորդ դեպքում՝ մոտ 10 անգամ:

Փաստորեն տարածաշրջանում ոչ ռեզիդենտ արտոնագրերի հայտերի առավել մեծ քանակը թույլ է տալիս ենթադրել, որ Վրաստանը ավելի գրավիչ տնտեսական գոտի և ներդրումային միջավայր է արտերկրյա արտոնագրատերերի համար, որն էլ մեկ անգամ ևս վկայում է Համաշխարհային մրցունակության զեկույցում Վրաստանի գրաված առաջատար դիրքը Հայաստանի նկատմամբ: Իսկ Ադրբեջանի բարձր դիրքը տարածաշրջանում ընդամենը պայմանավորվում է նավթային ռեսուրսների առկայությամբ:

Ցավոք Հայաստանում, վերջին տասնամյակներում, նկատելի անկում է գրանցվել գյուտերի ոչ միայն քանակական, այլև որակական բնութագիրը սովոր ցուցիչների տեսանկյունից, որը ներկայացված է հետևյալ դիագրամում:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերլուծական ակնարկում շարադրված նյութը՝ ակնհայտորեն պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը ունի հարյուրամյակների խորքից եկող հարուստ ստեղծագործական-նորարարական ժառանգություն, մեծ ավանդ համաշխարհային գյուտարարության ոլորտում: Նորարարությունը առաջընթաց է գիտության, նոր տեխնոլոգիաների և մարդկանց համար: Հայաստանը կանգնած է ազգային նորարարական համակարգի բարելավման խնդրի առջև: Այն պետք է ամրապնդի ներդրումային ու ինստիտուցիոնալ կարողությունները, մշակի նորարարության աջակցման հստակ քաղաքականություն և ռազմավարական ուղղվածություն, բարելավի գործող կառույցների միջև եղած համագործակցությունն ու փոխհարաբերությունները, առևտրայնացման հնարավորությունները:

Նորարարությունը պահանջում է միասնական և համընդհանուր հենք և փոխհամագործակցում, բայց ոչ երբեք մեկուսացում: Նորարարության զարգացման ուղին կախված է տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաներից, կրթական համակարգից, աշխատուժի և ֆինանսական շուկաներից, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համակարգից, ապրանքային շուկայում առկա մրցակցությունից և բարեկեցության մակարդակից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Изобретения Республики Армения (Арм. ССР), охватывающие период с 1924 по 1990гг. [Электронный ресурс]. – Электрон. Текстовые дан. (21МВ). – Ереван, Лрату, 2004.
2. Ա. Խաչիկյան, Ս. Ներսիսյան. Մտավոր սեփականություն. - Երևան, 2008. –286 էջ.
3. Լ.Ղազարյան. ՀՀ Արտոնագրերի վիճակագրական վերլուծություն. - Երևան, 2002. - 32 էջ
4. Մտավոր սեփականության պահպանության ուղեցույց. - Երևան, 2007. – 60 էջ
5. Գյուտեր և արտոնագրեր. Մտավոր սեփականության գործակալություն. - Երևան, 2009. - 68 էջ
6. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց «Տնտեսություն և արժեքներ». - Երևան, 2009. -116 էջ
7. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց. «Տնտեսություն և արժեքներ». - Երևան, 2010. -113 էջ
8. Պատկերացում արդյունաբերական սեփականության մասին. – Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն. – Երևան, 2010. - 20.
9. <http://www.aipa.am>. Մտավոր սեփականության գործակալություն
10. <http://www.tert.am>, [լրագրի Թերթ. am](http://www.terter.am) լրատվություն
11. <http://www.wipo.int>. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն
12. <http://www.armtown.com>
13. <http://www.weforum.org>. Համաշխարհային տնտեսական ֆորում, գլոբալ մրցակցություն
14. <http://www.worldbank>. Համաշխարհային բանկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	4
ԳՅՈՒՏԸ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	5
ԳՅՈՒՏԸ՝ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ	10
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	24